



ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1987—1988 ուսումնական տարեշրջանի վերաբացման հանդիսությունը:

Վեհափառ Հայրապետի կողքին, նախագահական սեղանի շուրջ, տեղ էին գրավել Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Ընորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, գերաշնորհ Ս. Տիրան արքեպիսկոպոս Ներսույանը, գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, գերաշնորհ Ս. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրոյանը, գերաշնորհ Ս. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, գերաշնորհ Ս. Մեսրոպ եպիսկոպոս Գրիգորյանը և ճեմարանի տեսուչ արժանապատիվ Ս. Եզնիկ քահանա Պետրոսյանը:

Ճեմարանի վերաբացման հանդիսությանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և Մայրավանքի պաշտոնեությունը:

Հանդիսությունն սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով: Այնուհետև Սամվել սրկ. Հովհաննիսյանի կատարմամբ հնչում է Սուլեռական Հայաստանի պետական հիմնը, որից հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են ճեմարանի քայլերգը:

Ապա Ս. Սեպուհ արեղա Չուլջալը Մատթեոսի ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ճեմարանի սաները կատարում են «Օգնական ընդունելի եղև իմ Տէր ինձ», «Անկանիւ առաջի քո», «Որք զարդարեցին» շարականները՝ հոգևոր ճեմարանի շարականագիտության և երաժշտագիտության դասախոսներ պրն. Խորեն Պալյանի և պրն. Կոմիտաս Քեշիշյանի ղեկավարությամբ:

Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Իր խոսքի սկզբում հակիրճ կերպով տեր հայրն անդրադարձավ մայրավանքի կրթօջախի անցած ուղուն, նրա կատարած կրոնական, ազգային ու մշակութային դերին: Անդրադառնալով հատկապես 1637 թ. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի կողմից Ա. Էջմիածնի դպրոցի վերաբացման փաստին, տեր հայրն ասաց. «Փաստորեն այսօրվա հոգևոր ճեմարանը շարունակությունն է այն վարդապետարանի, որ հաստատվեց Ա. Էջմիածնում ուղիղ 350 տարիներ առաջ: Այս իրողությունը մի առանձնակի իմաստ է տալիս այս ուսումնական տարվան, որի բացման համար մենք բոլորս հավաքվել ենք այստեղ, նվիրական այս հարկի տակ: Հոբելյանական այս իրողությունը միաժամանակ պարտավորեցնում է մեզ՝ հոգևոր ճեմարանի դասախոսներին, և հատկապես

ճեմարանի տեսչությանը, առանձնակի նվիրումով և աշխատասիրությամբ սկսել ու ավարտին հասցնել առաջիկա ուսումնական տարեշրջանը»:

Այնուհետև տեղ հայրն անդրադարձավ հոգևոր ճեմարանի այսօրվա վիճակին, ձեռք բերած հաջողություններին ու բացթողումներին: Վերջում տեղ հայրը հավաստիացրեց, որ սկսվող 1987—88 ուսումնական տարվա ընթացքում հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը ամեն ինչ կանեն՝ ուսանողության կարգապահությունն ու գիտական մակարդակն ավելի բարձրացնելու համար:

Այնուհետև իր օրհնության խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը.

«Աստուծո օգնականությամբ նաև այս դպրոցական տարու սկիզբին բացվում են դռները Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանի: Ես երջանիկ եմ, ինչպես նախորդ տարիներին, որ անձամբ ներկա եմ գտնվում՝ ողջունելու նոր դպրոցական տարին և բերելու իմ շնորհավորանքը և օրհնությունը ճեմարանի տեսչության, դասախոսական կազմին և ուսանողության, մաղթանքով, որ նաև այս տարի խաղաղ և գործարար պայմանների մեջ հոգևոր ճեմարանը իր գործունեությունը ծավալի և արձանագրի հաջողություններ իր ուսումնական հառաջդիմության և հոգևոր կրթության ճանապարհին: Գոհումակությամբ լսեցի հոգևոր ճեմարանի տեսուչի՝ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանի բովանդակալից և հետաքրքրական խոսքը, նախ պատմական տվյալներով և երկրորդ, մեր հոգևոր ճեմարանի անցյալ շրջանների ունեցած հաջողությունների մասին: Որքան եմ, որ առիթ ընծայվեց նրան, որպեսզի ներկայացնի ձեզ՝ մեր հոգևոր ճեմարանի երկու շրջանավարտների գիտական հաջողությունները՝ առաջինը՝ Լեւոնգրադի Ռուսական Եկեղեցու աստվածաբանական ակադեմիայում և երկրորդը Մոսկվայի ակադեմիայում: Ընդհանրապես եմ նաև դասախոսների գիտական տիրույթները, որոնք ուղղակի չեն առնչվում իրենց նյութերով մեր հոգևոր ճեմարանի հետ, բայց առնչվում են այնուամենայնիվ, որովհետև նրանք՝ այդ գիտնականները, դասախոսում են մեր ճեմարանի. հարկի տակ: Այստեղ կուզեի հատկապես ընդգծել բացառիկ հաջողությունը Պարզև վարդապետի՝ Լեւոնգրադի ակադեմիայում: Զուտ աստվածաբանական կատույց ունեցող մի աշխատություն է, բավական ծավալուն գործ՝ 160 էջ, համարյա գրքի չափ: Պետք է ասել, որ մենք երբեմն նվազ ենք գնա-

հատում Ռուս Պրավոսլավ Եկեղեցու աստվածաբանական վարժարանները և կարծեք առավելություն ենք տալիս արտասահմանի կաթոլիկ, անգլիկան կամ բողոքական ուսումնարաններին: Ես կարծում եմ, որ որոշ ուղղում պետք է մտցնենք մեր աշխատանքների մեջ և ստորադաս չնկատենք Ռուս Պրավոսլավ Եկեղեցու գիտական հաստատությունները, անշուշտ միշտ հարգանքի առարկա դարձնելով նաև արտասահմանյան քույր Եկեղեցիների գիտական կենտրոնները, որ մենք ուսանողներ ունենք այս պահում: Եվ, մի միտք էլ ուզում եմ ավելացնել, այն, որ մեր Եկեղեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Արեւիկայի Ուղղափառ Եկեղեցիների մեծ ընդամանքին է պատկանում, և հետևաբար մենք առավել առնչություններ ունինք, հմից եկած տակավին, Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքի հետ և աստվածաբանական մտածողության տեսակետով: Ահա թե ինչու, իմ կարծիքով, պետք է մենք հավասարակշռություն պահենք մեր վերաբերմունքի նկատմամբ քույր Եկեղեցիների աստվածաբանական, գիտական հաստատությունների առնչությամբ: Այստեղ մենք լավ նախընթացներ ստեղծեցինք, այսօրվա ճեմարանի՝ մեր տեսուչը տարիներ առաջ ուղարկելով Աթենք, որ նա կանոնավոր կերպով չորս տարի աշակերտեց համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում և ապա արժանի դարձավ դոկտորական տիտղոս ստանալու Աթենքի համալսարանից, մեծ ծավալուն աշխատությամբ, որ համալսարանի տնօրինմամբ հրատարակվեց առանձին հատորով, հունարեն լեզվով:

Ահավասիկ ուրախալի երևույթներ: Ես հուսով եմ, որ մեր հոգևոր ճեմարանի հետագա տարիների շրջանավարտները պիտի շարունակեն ընթանալ նույն ճանապարհով և արժանի պիտի դառնան բարձր գնահատանքների ոչ միայն մեր կողմից, այլ նաև քույր Եկեղեցիների գիտական հաստատությունների կողմից: Մեր ճանապարհը բաց է մեր առաջ այս տեսակետից, մենք իբրև Եկեղեցի, բարեբախտաբար, Հայաստանում ապրում ենք լավագույն պայմանների մեջ և հնարավորությունները ունենք քաջալերելու մեր երիտասարդներին, որպեսզի նրանք դառնան հետագա «առանց ամոթո մշակվեց» մեր Եկեղեցվո՝ գիտական պատմությամբ:

Այսօր բացառիկ պայմանների մեջ է, որ բացում ենք կատարում հոգևոր ճեմարանի, վայելելով ներկայությունը մեր Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների, գլխա-

վորությամբ Կոստանդնուպոլս Ամենապատիվ Սրբազան Պատրիարքին՝ մեր սիրեցյալ եղբորը, ներկայությունը մեզ բոլորիս նույնքան սիրելի՝ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսի, որ գալիս է Ամերիկայից, և գերաշնորհ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի և նրանց ուղեկցող երկու երիտասարդ հոգևորականների:

Եղբայրական սիրով ես ողջունում եմ նրանց ներկայությունը և հրավիրում եմ, որ բոլորի անունով և իր օրհնության խոսքը բերի այստեղ Ամենապատիվ Շնորհք Սըրբազան Պատրիարքը:

«Վեհափառ Տեր, ինձի պատիվ կրնեք և հաճույք կատարել այս կրթական տարվո շատ գեղեցիկ սկզբնավորության առիթով երկու խոսք ըսել: Մենք այնպես կենթադրենք, որ դուք՝ սիրելի տղայք, ձեր կյանքի ընդունակության ամենեն լավ շըրջանին մեջ կգտնվիք զարգանալու համար, հատաշրիմելու համար: Աստված մարդոց ընդունակության կարողությունը տվել է: Այդ ընդունակության, կրնանք ըսել, թե գազաթին եք, շուտով կըմբռնեք, լավ կհասկընաք, լավ կիրացնեք, և այսպես ըզձեզ մտքով, արտով, հոգիով կհարստացնեք: Դուք կգտնվիք միաժամանակ լավագույն պայմաններում մեջ այդ ընդունակությունը ավելի զարգացնելու և զորացնելու համար: Կակնարկեմ հոգևոր ճեմարանի գոյության, որում աշակերտելու եք եկել դուք ամենքդ: Փառք Նախախնամության, Մայր Աթոռի մեջ ունիք այս ճեմարանը, որմե գուրի ենք մենք Պոլսո մեջ: Եվ հետևաբար դուք, սիրելի աշակերտներ, բախտավոր եք, որ կտրվի ձեզի կարելիությունը ձեր մայրենի լեզվի կողքին ձեր կրոնքը և պատմությունը տրվելու, ինչպես նաև գիտական նյութեր ուսումնասիրելու՝ սպագաչին դատնալու համար Հայ Եկեղեցվո մշակներ: Պոլսո մեջ մենք ևս ունենք դարեվանք մը, այսուամենայնիվ այդ փակվել է իբրև կրոնական վարժարան, բայց կշարունակե իր գոյությունը իբրև բարձրագույն վարժարան: Եվ մենք դժվար կացության մատնված ենք, թե ուր պետք է դրկենք մեր քահանայական թեկնածուները նախ հայկական կրոնական կրթություն ստանալու և ապա, ի հարկին, օտար վարժարաններ երթալու և բարձրագույն ուսումնքին տիրանալու: Մեր գլխավոր մտահոգություններեն մեկը այս է ներկայիս, որմե փառք նախախնամության, ազատ է Մայր Աթոռը և մեր մյուս նվիրապետական Աթոռները: Ամեն պարագային փառք կուտանք Աստծու այս շնորհին համար: Ուսանիլը գործակցիլ է, ամենքդ այ

գիտեք, գործակցիլ ձեր և դասախոսներու միջև: Անոնք բան մը պիտի տան, դուք բան մը պիտի ընդունիք: Եվ ինչպես այնքան գեղեցկորեն քիչ առաջ Ավետարանեն կարդացվեցավ՝ ուսմունքը հավասարապես ամենքին կտրվի, սերմը ամենուրեք կցանվի, սերմը նույն ուժականությունը ունի, նույն կենսունակությունը ունի, գրեթե ամեն մեկ հատիկին մեջ: Տարբերությունը՝ նայած թե ինչ հողին վրա կիչնա: Տեսաք առակի մեջ, թե սերմերը զանազան տեղեր ինկան և երեք պարագաներին չիկարողացան պտղաբերվիլ: Պետք է որ պարարտ հողի վրա իչնա, որպեսզի պտղաբերվի: Հետևաբար այստեղ զանազան գիտություններ, արտաքին գիտություններ, կրոնական գիտություններ կտրվին ձեզի հավասարապես ամենքիդ: Ձեզմե յուրաքանչյուրը հող է և տարբերությունը անոր մեջն է: Երանի որ ամենքդ այ ըլլաք պարարտ հողեր, որպեսզի ինչ որ կենտույի ձեր մտքի անդատանին մեջը՝ անհկա աճի, մեծնա և ժամանակին տա արդյունքներ, ինչպես Ավետարանը կըսե՝ հարյուրավոր, վաթսունավոր և երեսնավոր: Եվ այս կետին մեջը՝ բերրի հողի վերածվելու կարելիությունները ձեզմե յուրաքանչյուրը ունի անհատապես յուրաքանչյուր աշակերտ ինքզինքը ինք կարող է պարարտ հողի վերածել: Ստույգ է, որ մենք որոշ ժառանգականությամբ կծնինք, առավել կամ նվազ կարողություններով կծնինք, բայց աշխատանքը և կամեցողությունը ամենամեծ դերը կկատարեն մեր կյանքի մեջ: Երբեմն բնական կարողություններեն ավելի կարևոր է հարատև աշխատանքը: Հետևաբար մինչև իսկ եթե բնութենեն այնպես կկարծեք, թե նվազ բախտավորված եք, աշխատանքով այդ պակասը կարող եք լրացնել: Կյանքի և ուսմունքի մեջ հաջողության միակ գաղտնիքը կկարծեմ թե՛ աշխատանքն է: Հետևաբար, կրթական տարվո այս սքանչելի առիթը և պատեհությունը, որ ձեզի կտրվի, վստահ եմ, որ պիտի օգտագործեք, պիտի աշխատիք հարատևորեն, կանոնավոր կերպով պիտի գործնաք և պիտի զարգանաք, ընդունելով, յուրացնելով և զորացնելով, մարսելով ինչ որ ձեզի կտրվի, և այսպես հարստացնելով զձեզ գիտական և կրոնական նյութերում մեջ:

Վեհափառը ինքնին պետք եղածը ըսավ ձեզի և ես չեմ ուզեր ավելի երկարել: Ինձի համար անակնկալ և սիրելի բախտավորություն մըն էր գտնվիլ ճեմարանի բացման առիթին և շնորհակալ եմ Վեհափառ Տիրոջ այս փոքր առիթը մեզի տված ըլլալու համար, և հետևաբար ես իմ մաղթանքները, իմ աղոթքները կմիացնեմ Վե-

հալիառի աղոթքներուն և մաղթանքներուն, որպէսզի Աստուծո չնոգին իջնէ ձեզմէ ամեն մեկու մեջը, և դուք, սիրելի աշակերտներ, աճիք, զորանաք ոչ միայն արտաքին գիտությունների մեջ, բայց առավելաբար հոգևոր գիտությունների մեջ: Մեզի՝ Եկեղեցւոյ պաշտոնյաներուս, ի մեջ այլ տիտղոսներու, կուտան նաև հոգևորական տիտղոսը և կենթադրեմ որ արդարև մեր հիմնական գիծը այդ պետք է ըլլա. հոգևորականներ պետք է ըլլան: Հոգևորական ըլլալու համար ոչ միայն այդ բնագոյր, այլ կոչումը և զգացումը պետք է ունենալ, այլ միաժամանակ հետզհետե հոգևորական գիտություններ ծծելով և ամբարելով՝ մեր մեջը մշակենք հոգևորականը և ձեզ կրկնատահացնեն, թե հոգևորականը, եթե մինչև իսկ նվազ կարողություններ ունեցող անձնավորություն ըլլա, շատ ավելի օգտակար կըլլա մեր ժողովուրդին, քան անոնք, որոնք խոշոր գիտականություն ունին, խոշոր դիպլոմներ ունին և միաժամանակ բարձր վարժարաններ են ավարտել, բայց նվազ հոգևորական են: Մեր փորձառությունը մեզի այնպես ուսուցած է, որ նվազ հոգևորականը նվազ ծառայություն կմատուցանէ հայ ժողովուրդին. իսկ առավել հոգևորականը, առավել հոգևորական զգացում, ապրում և գիտակցում ունեցողը ավելի ծառայություն կմատուցանէ թե՛ մեր

ժողովուրդին, թե՛ Աստուծո Եկեղեցիին: Ամենքս ալ կանչված ենք Աստուծո և իր ժողովուրդին, Իր Եկեղեցիին ծառայելու համար: Հետևաբար ամենքիս աղոթքն ու մաղթանքը այն է, որ որպէսզի Աստուծո ինքը ըլլա մեր ամենուս առաջնորդը և Իր Իմաստության չնոգին, շնորհաց բաշխիչ չնոգին իջնեն ամենքիս մտքերուն և սրբտերուն մեջը և մենք արժանավոր ժառանգորդները ըլլանք, արժանավոր ժառանգավորները ըլլանք մեր նախնայաց, որոնք դարերու դժվար կացություններու մեջ են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւոյ նախնախորհրդայն նախահանգիստը հասցուցին: Եվ այսօր այս հայրենիքը, Սուրբ Էջմիածինը, Մայր Աթոռը խաղաղ և բարգավաճ պայմաններու մեջ կգտնվեն, որուն համար մենք Աստուծո փառք կուտանք և կմաղթենք, որպէսզի այս խաղաղությունը թե՛ այս հայրենիքի մեջը և թե՛ ամբողջ աշխարհքի վրա տևական ըլլա Աստուծո փառքին համար և մարդոց զարգացման համար, մարդոց եղբայրության համար, մարդոց համերաշխության, հաշտության, սիրո համար, ամեն»:

Հոգևոր ճեմարանի վերաբացման սույն հանդիսությունն ավարտվեց խմբովին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

